Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 480-Լ հրամանի
Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 32902 /2021/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան — **26/07/2021**

1. **Արթուր Հովսեփյան Աշոտի** — ՀՎՀՀ **71040595**
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. **Տավուշ, Իջևան, Երևանյան 1 նրբ. 16**
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. **AM0586877**
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային ծառայությունների համարանիշը)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 29.05.2021թ. ԵԱՏՄ պետություններից ՀՀ տարածք է ներմուծվել 2015թ. թողարկման տարեթիվ ունեցող **ԱՏԳ ԱԱ 8703** ծածկագրին դասվող՝ **8,000** (համարժեք 4,166,240 ՀՀ դրամ) ԱՄՆ դոլար ինվոյսային արժեքով տրանսպորտային միջոց(ներ): ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 179-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ օրենսգրքի 171-րդ հոդվածում նշված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է այդ ապրանքների հարկման բազայի նկատմամբ՝ նույն հոդվածով ՀՀ ներմուծվող ապրանքների համար սահմանված համապատասխան դրույքաչափերով: Հետևաբար՝ վերը նշված տրասպորտային միջոց(ներ)ի մասով պարտավոր էիք Օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր ու վճարել արդյունքում առաջացող բնապահպանական հարկը՝ մինչև տրասպորտային միջոց(ներ)ի ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձի կողմից **29.05.2021թ.** իրականացված ներմուծման գործարքի մասով ներմուծման հարկային հայտարարագիր չի ներկայացվել և չի վճարվել բնապահպանական հարկի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ օրենսգրքի 171-րդ հոդվածում նշված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար, մասնավորապես **8703 ԱՏԳ ԱԱ** ծածկագրին դասվող **5 տարուց ավելի մինչև 10 տարի ներառյալ** թողարկման տարեթիվ ունեցող ավտոմեքենաների համար պետական բյուջե վճարման ենթակա բնապահպանական հարկը հաշվարկվում է այդ ապրանքների հարկման բազայի նկատմամբ՝ **2 տոկոս** դրույքաչափով՝ **83,324** դրամ [8,000 x 2% x 520.78 /փոխարժեք/]:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն, հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով՝ **1,199** ՀՀ դրամ (26/07/2021թ. դրությամբ) [83,324 x 36օր x 0.04%]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը (26/07/2021թ. դրությամբ) կազմում է՝ **84,523** դրամ [83,324 + 1,199]:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 26/07/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

Մաքսային մարմինների կողմից տրամադրված տեղեկատվություն

7.Ընդամենը

8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի ավագ հարկային տեսուչ Լիլիթ Բաբայան